ՍՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԼԵՆԻՆՅԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

ԳՈՒՐԳԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վաթսուն տարում մեծ Հոկտեմբերի ծնունդ Սովետական Միության ձեռք բերած նվաճումները համոզիչ վկայությունն են այն բանի, որ սոցիալիզմը ապահովել է հասարակության կյանքի բոլոր կողմերի առաջադիմության՝ պատմության մեջ չտեսնված տեմպեր։

Սոցիալիզմի ամենանշանակալի և թանկ նվաճումներից մեկը Սովետական Միության ժողովուրդների լենինյան անխախտ բարեկամությունն է։ «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 60-րդ տարեդարձի մասին» ՍՄԿԿ Կենտկոմի 1977 թ. հունվարի 31-ի որոշման մեջ նշվում է, որ «Ամուր և միաձույլ են Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների մեծ ու հզոր Միությունը կազմող բոլոր ազգերի ու ազգությունների եղբայրական բարեկամությունն ու միասնությունը։ Այդ միության կազմավորումն ու հաջող զարգացումը ՍՄԿԿ-ի լենինյան ազգային քաղաքականության հաղթանակն են, նրա իրոք ինտերնացիոնալիստական բնույթի վառ վկայությունը, սոցիալիզմի մեծ նվաճումը։ Մեր ժողովուրդների բարեկամության ու համագործակցության նյութական կայուն հիմք է դարձել ամբողջ երկրի սահմաններում կազմավորված միասնական տնտեսական օրգանիզմը։ Ապահովվել է բոլոր ազգերի ու ազգությունների փաստական հավասարությունը, կյանքի բոլոր ոլորտներում ծաղկել է ձևով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան, հաստատվել է աշխատավոր մարդկանց իսկական եղբայրությունն՝ անկախ նրանց ազգությունից, եղբայրություն, որը զոդված է արմատական շահերի, նպատակների և մարքս-լենինյան գաղափարախոսության ընդհանրությամբ»[1]։

ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությունն ու եղբայրական միասնությունն անհնարին է ըմբռնել առանց այն իրողության հաշվառման, որ մեր երկրում կազմավորվել է մարդկանց պատմական նոր ընդհանրություն՝ սովետական ժողովուրդը, որը ՍՍՀՄ հարյուրից ավելի ազգերի ու ազգությունների ինտերնացիոնալ և օրգանական հանրություն է։ Այդ հանրության անխախտ հիմքը բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության և մտավորականության դաշինքն է՝ բանվոր դասակարգի առաջատար դերի պայմաններում։

Այն ամենը, ինչ մեծ Հոկտեմբերի ուղիով առաջընթացի 60 տարիներին ձեռք է բերվել մեր երկրում, սովետական ժողովրդի անձնվեր աշխատանքի արդյունքն է։ Մեզանում այլևս չկան «առաջավոր» և «հետամնաց» ազգեր։ Անցյալի հուշ է դարձել «ազգային ծայրամասեր» հասկացողությունը։ Բոլոր

---

[1] «Սովետական Հայաստան», 1. II. 1977։

ժողովուրդների միասնական ջանքերով և առաջին հերթին ռուս ժողովրդի եղբայրական անշահախնդիր օգնության շնորհիվ սովետների երկրի բոլոր շրջանները, ազգային հանրապետությունները ծաղկում են ապրում։

ՍՄԿԿ լենինյան ազգային քաղաքականության հետևողական կիրառման շնորհիվ սովետական բոլոր հանրապետությունների տնտեսական և սոցիալական զարգացման մակարդակները հավասարվել են, նրանց միջև ամրապնդվել են տնտեսական ու հոգևոր կապերը, աճել է աշխատանքի տարածքային բաժանման արդյունավետությունը, էապես մեծացել է յուրաքանչյուր հանրապետության ներդրումը համապետական խնդիրների լուծման, կոմունիստական հասարակարգի կառուցման գործում։

ՍՍՀՄ-ի կազմում հիմնովին կերպարանափոխվել է միութենական և ինքնավար հանրապետությունների տնտեսական համայնապատկերը։ Նրանցից յուրաքանչյուրում ստեղծվել են ժամանակակից արդյունաբերություն, առաջավոր գյուղատնտեսություն և բազմաքանակ մասնագետ-կադրեր։ Այսպես, օրինակ, Միջին Ասիայում ու Ղազախստանում աճել են մետալուրգիայի, ծանր արդյունաբերության և մեքենաշինության խոշոր կենտրոններ, կառուցվել են առաջնակարգ հիդրոկառույցներ և ջրանցքներ։ Բավական է ասել, որ 1913 թ. համեմատությամբ 1975 թ. Ղազախստանի արդյունաբերական արտադրանքի ծավալն աճել է 208, Կիրգիզիայինը՝ 286, Մոլդավիայինը՝ 226, Բելոռուսիայինը՝ 166 անգամ, այն ժամանակ, երբ ընդհանուր միութենականն աճել է 131 անգամ[2]։

Կոմունիստական հասարակարգի կառուցման գործում որոշակի ավանդ է մուծում նաև հայ ժողովուրդը։ Հայկական ՍՍՀ-ի տարածքը կազմում է Սովետական Միության տարածքի 0,1 %-ը, իսկ բնակչությունը՝ միութենականի 1%-ից քիչ ավելին է։ Այդուհանդերձ, հանրապետության արդյունաբերական արտադրանքի 15 տեսակների, այդ թվում պղնձարջասպի, կարբիդի, շարժական էլեկտրակայանների, ուժային տրանսֆորմատորների, մետաղահատ հաստոցների արտադրության տեսակարար կշիռը կազմում է միութենական արտադրության 5—35%-ը[3]։ Մեր հանրապետությունում այժմ արտադրվում են 7,8 անգամ ավելի շատ մետաղահատ հաստոցներ, քան արտադրվել է ամբողջ ցարական Ռուսաստանում 1913 թ.։ Նշանակալի է նաև տարբեր սարքերի ու ավտոմատացման միջոցների, էլեկտրահաշվիչ մեքենաների արտադրությունը։ Սովետական Հայաստանի բաժինն զգալի է նաև արդյունաբերական արտադրանքի համամիութենական արտահանման մեջ։ Հանրապետության 200 անուն արտադրանք առաքվում է արտասահմանյան 80 երկրներ[4]։ Հայաստանը դարձել է բարձր զարգացած ինդուստրիալ հանրապետություն։

Սովետական հասարակության ամբողջ զարգացումը ներկայումս ընթանում է կուսակցության XXV համագումարի գաղափարների հարաճուն ներգործությամբ։ Համագումարի նյութերը մեծ ներդրում մտցրին մասնավորապես կուսակցության լենինյան ազգային քաղաքականության, սովետական ժողովուրդների բարեկամության ու եղբայրական համագործակցության հետագա զարգացման գործում։ Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ նշված է,

---

[2] «Народное хозяйство СССР в 1975 г.», М., 1976, стр. 198.

[3] «Народное хозяйство СССР в 1974 г.», М., 1975, стр. 90, 91.

[4] «Ագիտատոր և պրոպագանդիստ», 1975, № 21, էջ 5—14։

որ կուսակցության XXIV համագումարից հետո անցած ժամանակաշրջանում «էլ ավելի ամրապնդվեցին սովետական հասարակության բարոյա-քաղաքական միասնությունը, մեր երկրի բոլոր ժողովուրդների եղբայրական բարեկամությունը»[5]։

Սովետական կոմունիստների համաժողովի առաջադրած փաստաթղթերում ու նյութերում լենինյան ազգային քաղաքականությունը կոնկրետացված է զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանի համեմատ, նշված է աշխատավորների ինտերնացիոնալ ու հայրենասիրական դաստիարակության գիտականորեն հիմնավորված լայն ծրագիր, սահմանված են սովետական ժողովրդի սոցիալ-քաղաքական, գաղափարա-բարոյական ու ինտերնացիոնալ միասնության հետագա ամրապնդման, ազգերի ու ազգությունների ծաղկման ու մերձեցման ապահովման, կոմունիստական շինարարության գործում նրանց ընդհանուր ներդրման մեծացման գործնական ուղիները։

ՍՄԿԿ լենինյան ազգային քաղաքականությունը, որը նպատակամղված է ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը, նրանց տնտեսական, գաղափարա-քաղաքական, սոցիալական և կուլտուրական հետագա ծաղկմանն ու մերձեցմանը, մարմնավորվել է 10-րդ հնգամյա պլանում։ «Սովետական Միության էկոնոմիկայի զարգացման հնգամյա պլանը,— ասաց Լ. Ի. Բրեժնևը ՍՄԿԿ Կենտկոմի 1976 թ. հոկտեմբերյան պլենումում արտասանած ճառում,— հաշվի է առնում յուրաքանչյուր միութենական և ինքնավար հանրապետության առանձնահատկություններն ու պահանջմունքները, ապահովում նրանց ներդաշնակ զարգացումը, նրանց ընդհանուր վերելքը դեպի սոցիալական առաջադիմության նոր բարձունքներ։ Մեր հնգամյակը ժողովուրդների բարեկամության լենինյան քաղաքականությունն է՝ թարգմանված էկոնոմիկայի լեզվով»[6]։

ՍՍՀՄ էկոնոմիկան միասնական տնտեսական օրգանիզմ է, որը կազմավորվել է երկրի բոլոր ազգերի և ազգությունների ընդհանուր տնտեսական նպատակների և շահերի հիման վրա։ Գտնվելով ՍՍՀՄ-ի կազմի մեջ, հիմնվելով աշխատանքի համամիութենական բաժանման վրա, յուրաքանչյուր հանրապետություն հնարավորություն ունի իր արտադրությունը մասնագիտացնել այն ուղղություններով, որոնք համապատասխանում են նրա տնտեսական և բնական պայմաններին, բնակչության աշխատանքային ունակություններին, հասարակական-պատմական գործոններին։ Մասնագիտացման նման եղանակն ապահովում է հանրապետություններից յուրաքանչյուրի էկոնոմիկայի և ամբողջությամբ վերցրած Սովետական Միության ժողովրդական տնտեսության արդյունավետության բարձրացումը, առանձին հանրապետությունների և ամբողջ երկրի շահերի արդյունավետ զուգորդումը։

Ազգային հարաբերությունների հասունության ներկա էտապում, միասնական ժողովրդատնտեսական համալիրի պայմաններում ՍՄԿԿ-ն պահանջում է, որպեսզի տնտեսության բոլոր օղակները հստակ և ներդաշնակ աշխատեն, որպեսզի նրանցից և ոչ մեկը ետ չմնա։ Մեր օրերում արտադրողական ուժերի տեղաբաշխման և կապիտալ ներդրումների քաղաքականությունը թելադրվում է ոչ թե ազգային շրջանների երբեմնի հետամնացության վերացման պահանջով, որը հատուկ էր սոցիալիզմի կառուցման առաջին շրջանին, այլ

5 «ՍՄԿԿ XXV համագումարի նյութերը», Երևան, 1976, էջ 4։
6 «Սովետական Հայաստան», 26. X. 1976։

երկրի ամբողջ ժողովրդական տնտեսությունը, միութենական ու ինքնավար հանրապետությունների էկոնոմիկան առավել բարձր մակարդակի ու արդյունավետության հասցնելու միահամուռ ձգտմամբ։ Դրանում է հասուն սոցիալիզմի պայմաններում միասնական ժողովրդատնտեսական համալիրի զարգացման սկզբունքային առանձնահատկությունը։

Կոմունիստական շինարարության փորձը ցույց է տալիս, որ կառավարման ու պլանավորման լավ կազմակերպման, ընդհանուր տնտեսական և գիտատեխնիկական գործոնների հետ միասին վճռական դեր է խաղում աշխատանքի մարդը, նրա գիտակցությունը և աշխարհայեցողությունը, երկրի, ամբողջ ժողովրդի ընդհանուր գործում սովետական մարդու անձնական աշխատանքային և ստեղծագործական ավանդի հասարակական նշանակության ըմբռնումը։ Աշխատանքային ջանքերի այդ փոխադարձ շահագրգռվածության և ընդհանրության վրա էլ հիմնվում է Սովետական Միության բոլոր ազգերի և ազգությունների աշխատավորների բարեկամության ու եղբայրության ծաղկումը։ Ինտերնացիոնալիստական աշխարհայացքը և քաղաքականությունը, բարոյականության նորմաները և սովետական ապրելակերպի նկատմամբ հայացքները զարգացած սոցիալիզմի պայմաններում դառնում են նյութական վիթխարի ուժ։ Ահա թե ինչու մեզանում ամեն ոք քաջ գիտակցում է, որ սովետական յուրաքանչյուր ազգի տնտեսական ու կուլտուրական հաջողությունները նաև իր սեփական ազգի հաջողություններն են, որովհետև դրանք միաձուլվում են մեր հայրենիքի միասնական ժողովրդական հարստության բազմապատկման ստեղծագործական պրոցեսի մեջ։

Համազգային այդ մղումով պետք է բացատրել սովետական մարդկանց աշխատանքային մեծագործությունները։ Սոցիալիզմի ու կոմունիզմի մեծ կառույցները սովետական մարդկանց կողմից ընկալվում են որպես իրենց հարազատ, կենսական գործը։ Հայրենասիրական նույն մղումներն են ընկած ուկրաինացի և կուբանցի մեխանիզատորների նախաձեռնության հիմքում, երբ նրանք իրենց բերքը հավաքելով օգնության են շտապում Սիբիրի և Ղազախստանի հողագործներին, երբ ադրբեջանցի և բաշկիր նավթագործ վարպետները պատվի գործ են համարում իրացնելու Արևմտյան Սիբիրի նավթային հարստությունները։

Սովետական ժողովուրդների ջերմ բարեկամության և եղբայրական համագործակցության մարմնավորում է Արփա—Սևան թունելի կառուցումը, որին մասնակցում են երկրի բազմաթիվ գիտական և նախագծային հիմնարկների, արտադրական ձեռնարկությունների կոլեկտիվներ։ Կասկածից վեր է, որ փոքրիկ Հայաստանն այդքան վիթխարի ու թանկ արժեցող թունելը կարող էր կառուցել միայն Սովետական Միության ժողովուրդների տնտեսական և գիտատեխնիկական համակողմանի օգնությամբ։ Կառուցում հայերի հետ միասին ձեռք-ձեռքի տված աշխատում են 30 ազգերի ներկայացուցիչներ։ ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական բարեկամության մարմնավորումն են նաև հանրապետությունում կառուցված խոշոր ջերմաէլեկտրակայանները և հայկական ատոմակայանը, որոնցում արմատավորվել է երկրի էներգետիկ հսկաների կառուցման ժամանակ բարեկամների կուտակած արժեքավոր փորձը։

Թաթարական ինքնավար հանրապետությունում կառուցվող արդյունաբերական հսկայի՝ ԿամԱԶ-ի, դերը բացառիկ մեծ է Սովետական Միության ժողովրդական տնտեսության համար։ Միաժամանակ այդ գործարանի գոր-

ծարկումը Թաթարական ԻՍՍՀ-ին հնարավորություն կտա զգալիորեն ավելացնելու հանրապետության արդյունաբերության հիմնական ֆոնդերը. վիթխարի առաջընթաց քայլ կատարելու գիտատեխնիկական առաջադիմության ուղղությամբ։ Ուստի պատահական չէ, որ ԿամԱԶ-ը կառուցում է ամբողջ երկիրը։ Այդ խոշորագույն կառույցին մասնակցում են ավելի քան 100 գիտահետազոտական և նախագծային ինստիտուտներ ու հիմնարկներ, մոտ 5 հազար գործարաններ, կոմբինատներ և ֆաբրիկաներ։ 307 քաղաքներ նրան մատակարարում են շինանյութեր, տեխնիկա և սարքավորում։ Կառույցում աշխատում են 96 քաղաքների և մարզերի պատվիրակներ, մի քանի տասնյակ ազգությունների ներկայացուցիչներ[7]։

ՍՄԿԿ XXV համագումարը նշեց, որ 10-րդ հնգամյակը խոշոր առաջընթաց քայլ կլինի միութենական հանրապետությունների էկոնոմիկայի մակարդակների հավասարեցման պրոցեսի մեջ։ Այդ տեսակետից հաջողությունն ամենից առաջ կախված է յուրաքանչյուր հանրապետության աշխատավորների նախաձեռնությունից և ջանքերից։ Համագումարում Ա. Ն. Կոսիգինը ասաց. «Մեր պլանային սոցիալիստական էկոնոմիկայի և հանրապետությունների լայն նախաձեռնության միասնության հիման վրա տասներորդ հնգամյակում կշարունակվի նրանց զարգացման մակարդակների հետագա հավասարեցումը»[8]։

Միավորված լինելով ջերմ բարեկամության ու եղբայրության անխախտ կապերով, Սովետական Միության բոլոր ազգերն ու ազգություններն ունեն բոլոր հնարավորությունները՝ նյութական արտադրության, գիտության ու տեխնիկայի բոլոր բնագավառներում հետագա առաջընթացի համար։

Սովետական ժողովուրդների բարեկամության ու եղբայրական համագործակցության հետագա ամրապնդման վրա էական ազդեցություն են գործում երկրի քաղաքական կյանքում կատարվող պրոցեսները։ Այդ բնագավառում կուսակցության գիծը, ինչպես նշվեց ՍՄԿԿ XXV համագումարում, սովետական հասարակության քաղաքական սիստեմի համակողմանի զարգացումն է, ՍՍՀ Միության ամրապնդումը, միասնական սոցիալիստական և ազգային պետականության կատարելագործումը։ Սովետական ազգերի և ազգությունների քաղաքական կյանքի ընդհանրության վառ վկայությունը, նրանց ինտերնացիոնալ միասնության կենդանի մարմնացումն է համաժողովրդական քվեարկությամբ պարբերաբար ընտրվող մեր պետության բարձրագույն օրգանը՝ ՍՍՀՄ Գերագույն սովետը։ Նրա կազմն ու կառուցվածքը, օրենսդրական գործունեությունը արտացոլում են սովետական իշխանության, մեր հասարակության քաղաքական համակարգի իսկական ինտերնացիոնալիզմն ու դեմոկրատիզմը։ Այսպես, 1974 թ. ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատ են ընտրվել 61 ազգերի ու ազգությունների ներկայացուցիչներ։

ՍՍՀՄ և միութենական հանրապետությունների Գերագույն սովետների սեսիաներում ընդունվող ժողովրդատնտեսական պլանների ու պետական բյուջեների մասին օրենքներում և այլ բնույթի որոշումներում օրենսդրական արտացոլում են գտնում կուսակցության ազգային քաղաքականության գաղափարներն ու ղեկավար ցուցումները, սոցիալիստական ազգերի ծաղկման ու եղբայրական համագործակցության լենինյան կուրսը։

---

7 «Вопросы философии», 1976, № 8, стр. 18.

8 «ՍՄԿԿ XXV համագումարի նյութերը», էջ 224։

Իրենց կազմով ու գործունեության բնույթով ՍՍՀՄ ազգերի ու ազգությունների բարեկամության և ինտերնացիոնալ միասնության տիպար են աշխատավորների դեպուտատների գյուղական ու ավանային, շրջանային ու քաղաքային սովետները։ ՌՍՖՍՀ տեղական սովետներում կան ավելի քան 100, Ուկրաինայում՝ 60, Վրաստանում՝ 57 ազգերի և ազգությունների ներկայացուցիչներ։ Իր գործունեության մեջ յուրաքանչյուր դեպուտատ «ղեկավարվում է համապետական շահերով,— ասվում է դեպուտատի ստատուսի մասին օրենքում,— հաշվի է առնում ընտրական օկրուգի բնակչության պահանջները, ինչպես նաև միութենական, ինքնավար հանրապետության, ինքնավար մարզի, ազգային օկրուգի տնտեսական, կուլտուրական, ազգային և այլ առանձնահատկությունները»[9]։

Սովետական ժողովուրդների ջերմ բարեկամությունն ու եղբայրական համագործակցությունը տնտեսական հարաբերությունների, կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման, երկրի քաղաքական համակարգի և կյանքի այլ խնդիրների հետ միասին ընդգրկում են նաև մշակութային հարաբերությունները։ ՍՍՀՄ-ի տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքի ինտերնացիոնալիզմը ակնառու արտացոլվել է միասնական սոցիալիստական կուլտուրայի մեջ։ Միութենական յուրաքանչյուր հանրապետության աշխատավորների տնտեսական ու հոգևոր գործունեությունը հազարավոր թելերով կապված է սովետական մյուս ժողովուրդների ստեղծագործ աշխատանքի հետ։ «Ազգային միջնորմների խորտակումը», այսինքն՝ նախկինում տարբեր ազգերին իրարից բաժանող վաղեմի սահմանների ջնջումը, ՍՍՀՄ ազգերի կուլտուրայի համակողմանի ծաղկումն ու համագործակցությունը պայմանավորել են մի պրոցես, որը իրավամբ կարելի է բնութագրել որպես սովետական բոլոր ժողովուրդների համատեղ հոգևոր ստեղծագործություն։ Մշակութային համագործակցության այդ համապարփակ պրոցեսն է առաջ մղում ՍՍՀՄ բազմազգ կուլտուրան, արվեստն ու գրականությունը։

Իր ոգով և սկզբունքային բովանդակությամբ միասնական սովետական սոցիալիստական կուլտուրան ընդգրկում է մեր հայրենիքի ժողովուրդներից յուրաքանչյուրի կուլտուրայի ու կենցաղի առավել արժեքավոր գծերն ու ավանդույթները։ Այդ կուլտուրան սոցիալիստական է իր բովանդակությամբ և զարգացման գլխավոր ուղղությամբ, բազմազան է ազգային ձևերով, ինտերնացիոնալիստական է ոգով ու բնույթով։ Այն Սովետական Միության բոլոր ազգերի ու ազգությունների կողմից ստեղծվող հոգևոր արժեքների օրգանական համաձուլվածքն է։ Գրականության և արվեստի ստեղծագործությունները, սովետական ժողովուրդների հոգևոր նվաճումներն ընկալվում են ոչ միայն որպես ազգային, այլև՝ որպես համասովետական հարստություն։ Սովետական կուլտուրան չի կարելի պատկերացնել առանց մեր երկրի ազգերի և ազգությունների գրականության ու արվեստի փոխհարստացման։ ՍՍՀՄ-ում ավանդույթ դարձած հոգևոր արժեքների փոխանակության, ազգային կուլտուրաների ծաղկման ու ինտերնացիոնալացման գործուն ձևերից են եղբայրական հանրապետությունների արվեստի ու գրականության տասնօրյակներն ու շաբաթները, ՍՍՀՄ ժողովուրդների գեղարվեստական գրականության թարգմանությունները, թատերա-երաժշտական կոլեկտիվների ավանդական դարձած փոխայցե-

[9] «О статусе депутатов Советов депутатов трудящихся в СССР», М., 1976, стр. 2.

լությունները, կուլտուրայի և գիտության գործիչների հանդիպումները, միութենական օրգաններում (գրողների, կոմպոզիտորների, նկարիչների, կինեմատոգրաֆիստների, ճարտարապետների միություններ) միավորվելը, հանրապետությունների միջև որակյալ կադրերի փոխանակումը, գրքի միամսյակների ու տասնօրյակների, նկարչական ցուցահանդեսների ու կինոփառատոների կազմակերպումը և այլն։ Հոգևոր արժեքների փոխանակության պրակտիկան վկայում է, որ սովետական ազգային կուլտուրաներից յուրաքանչյուրը սնվում է ոչ միայն սեփական աղբյուրներից, այլև մյուս եղբայրական ժողովուրդների հոգևոր հարստությունից և իր հերթին բարերար ազդեցություն է գործում նրանց վրա, հարստացնում ազգային մյուս կուլտուրաները։ Առաջադիմական այս պրոցեսը լիովին համապատասխանում է սոցիալիզմի ոգուն մեր երկրի բոլոր ազգերի ու ազգությունների շահերին։ Հենց այսպես են դրվում նոր, կոմունիստական կուլտուրայի հիմքերը, որը չգիտի ազգային պատնեշներ և հավասար չափով ծառայում է բոլոր աշխատավոր մարդկանց հոգևոր պահանջմունքներին։ Կոմունիստական հասարակության կուլտուրան բոլոր ժողովուրդների ստեղծած հոգևոր լավագույն արժեքների համադրությունն է։

Ազգային կուլտուրաների բուռն զարգացման ու համագործակցության. երկրի մասշտաբով հոգևոր կյանքի ինտերնացիոնալացման պրոցեսը բնորոշող գործոն է ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների համար ընդհանուր կրթության և դաստիարակության, կադրերի պատրաստման, գիտական գործունեության կազմակերպման և գիտելիքների տարածման միասնական սիստեմը։ Ինչպես վկայում են ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1976—1980 թթ. հիմնական ուղղությունները, կուլտուր-գաղափարական այդ պրոցեսը չի սահմանափակվում այս կամ այն հանրապետության շրջանակներով, նրա ներքին պահանջմունքների բավարարումով, այլ կրում է համամիութենական բնույթ. որը լիովին համապատասխանում է զարգացած սոցիալիստական հասարակարգի, արդի գիտատեխնիկական առաջադիմության պահանջներին։

Ի հակադրություն կապիտալիզմի, սոցիալիզմը նպաստավոր պայմաններ է ստեղծել ազգային կուլտուրաների և լեզուների համակողմանի զարգացման համար։ Դրա բնորոշ օրինակներից է Ուզբեկստանը։ Մինչև հեղափոխությունն այնտեղ գրագետների թիվը միայն 2% էր կազմում։ Այժմ Սովետական Ուզբեկստանը ոչ միայն համատարած գրագիտության հանրապետություն է, այլև ունի 42 բուհ, որոնցում սովորում է 246,6 հազար ուսանող։ Հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ աշխատում են բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությամբ 788 հազար մասնագետներ՝ չորս անգամ ավելի, քան եղել է ամբողջ ցարական Ռուսաստանում։ Մինչև հեղափոխությունն ուզբեկ ժողովուրդը կուլտուրայի ոչ մի օջախ չուներ։ Այսօր հանրապետությունում կա 26 թատրոն, 31 թանգարան, 2 կինոստուդիա, 4500 կինոսարքավորում, 3704 ակումբ, 6303 գրադարան և կուլտուր-լուսավորական բազմաթիվ այլ օջախներ[10]։

Ազգային կուլտուրաների ծաղկման ու զարգացման համանման պատկերը բնորոշ է միութենական և ինքնավար բոլոր հանրապետություններին։ Սովետական յուրաքանչյուր ազգի դեմքը բնութագրում են ժողովրդական կրթության, այդ թվում բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության

---

10 «Народное хозяйство СССР в 1975 г.», стр. 554, 681, 693, 698, 702—703, 704.

բուռն աճը, գիտության, գրականության ու արվեստի ծաղկումն ու մերձեցումը։ Այդ ամենը հնարավոր է դարձել ՍՍՀՄ ժողովուրդների բազմակողմանի եղբայրական համագործակցության ու փոխօգնության շնորհիվ։

Սովետական Միության բազմազգ կուլտուրան բուռն զարգացում կապրի 10-րդ հնգամյակում։ Պերճախոս է Սովետական Հայաստանի օրինակը։ 1976—1980 թթ. պլանավորված է պատրաստել 125,2 հազար մասնագետ, այդ թվում 50,2 հազարը բարձրագույն կրթությամբ, 9-րդ հնգամյակի 112 հազարի դիմաց։ Եթե անցած հնգամյակում պրոֆտեխուսումնարաններն ավարտել ու ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերում աշխատանքի է անցել 97 հազար մարդ, ապա 10-րդ հնգամյակում այդ թիվը կհասնի 134 հազարի[11]։ Ընդսմին, խնդիր է դրված հնգամյակի վերջում ավարտել միջնակարգ կրթությամբ որակյալ բանվորների պատրաստմանն անցնելը։ Արդեն 1976 թ. վերջին Հայկական ՍՍՀ-ում ուսուցման տարբեր ձևերում ընդգրկված էր ավելի քան 1.106 հազար մարդ, որոնցից բոլոր տեսակի հանրակրթական դպրոցներում սովորում էր 668 հազար, տեխնիկումներում և ուսումնարաններում՝ 53,7 հազար, բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ 55,5 հազար մարդ[12]։

Սահմանելով երկրի զարգացման հիմնական ուղղությունները, կոմունիստական կուսակցությունը մեծ նշանակություն է տալիս աշխատավորներին, հատկապես երիտասարդությանը սովետական հայրենասիրության և սոցիալիստական ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելու հարցին, այն բանին, որպեսզի սովետական բոլոր մարդիկ դաստիարակվեն սոցիալիստական հայրենիքի հանդեպ համազգային հպարտության, ՍՍՀՄ բոլոր ազգերին ու ազգություններին խորապես հարգելու, սոցիալիզմի նվաճումներին պաշտպան կանգնելու պատրաստակամության գաղափարների ոգով։ Այդ տեսակետից քաղաքական և դաստիարակչական հսկայական դեր խաղացին ՍՍՀՄ կազմավորման հինգամյակի և Հայրենական մեծ պատերազմում Սովետական Միության տարած համաշխարհային պատմական հաղթանակի երեսնամյակի տոնակատարությունները։ Այդ հոբելյանների լեյտմոտիվը դարձան անցած կես դարի աշխատանքային սխրանքները և մեծ Հայրենականի մարտական սխրագործությունների բովում աճած ու կոփված ՍՍՀՄ բոլոր դասակարգերի ու սոցիալական խմբերի, ազգերի ու ազգությունների անխախտ միասնությունը, իրենց մեծ հայրենիքին նրանց նվիրվածությունը, ժողովուրդների ինտերնացիոնալ եղբայրությունը։

ՍՄԿԿ XXV համագումարը գոհունակությամբ նշեց, որ կուսակցական կազմակերպությունները ինտերնացիոնալ և հայրենասիրական դաստիարակության աշխատանքը սկսել են տանել ավելի նախաձեռնողաբար և լայնորեն։ «Արմատախիլ են արվում նացիոնալիզմի ու շովինիզմի առանձին դրսևորումներ, պատմական իրադարձությունների գնահատման նկատմամբ ոչ դասակարգային մոտեցման փաստերը, տեղայնության դրսևորումները, նահապետականության գովերգման փորձերը։ Այս ամենը գտավ աշխատավորների խոր ըմբռ-

---

11 Գ. Ա. Արզումանյան, ՍՍՀՄ ժողտնտեսության զարգացման 1976—1980 թթ. հիմնական ուղղությունները ՍՄԿԿ Կենտկոմի նախագծի մասին (զեկուցում ՀԿԿ XXVI համագումարին), Երևան, 1976, էջ 64—65, «Народное хозяйство Арм. ССР в 1974 г.», Ереван, 1975. стр. 234, 235.

12 «Սովետական Հայաստան», 28. I. 1977։

նումն ու պաշտպանությունը, դրականորեն ազդեց մեր երկրի ժողովուրդների բարեկամության ու եղբայրության հետագա ամրապնդման վրա»[13]։

Պրոլետարական ինտերնացիոնալիզմի, ՍՍՀՄ բոլոր ազգերի ու ազգությունների բարեկամության ու եղբայրական համագործակցության կենդանի մարմնացում է կոմունիստների 16 միլիոնանոց լենինյան կուսակցությունը, որի անդամ են 130 ազգերի ու ազգությունների ներկայացուցիչներ։ «ՍՄԿԿ-ն ինտերնացիոնալիստ լենինյանների կուսակցություն է, թե իր գաղափարախոսությամբ ու քաղաքականությամբ, և թե իր կազմով ու կառուցվածքով... Կուսակցությունը միավորում է երկրի բոլոր ազգերի ու ազգությունների առաջավոր ներկայացուցիչներին։ Նա ՍՍՀՄ աշխատավորների մարտական ընկերության ու բարեկամության, ամբողջ սովետական ժողովրդի անխախտ միասնության առավել վառ մարմնավորումն է։ Մեզանում բոլոր կոմունիստները, ինչ ազգության էլ որ պատկանելիս լինեն, միասնական լենինյան կուսակցության անդամներ են։ Նրանք ունեն միատեսակ իրավունքներ ու պարտականություններ, հավասար պատասխանատվություն են կրում երկրի բախտի համար»[14]։

Ինչպես նշվում է «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 60-րդ տարեդարձի մասին» ՍՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ, ՍՍՀՄ-ում ազգային քաղաքականության լենինյան սկզբունքների հետևողական իրականացումը ձգողական ուժ է դարձել աշխարհի համար և շատ ուսանելի օրինակ է տալիս մարդկային հասարակության զարգացման ամենաբարդ հարցերից մեկի՝ ազգային հարցի լուծման գործում։ Ազգային հարցի հաջող լուծումը մեր երկրում, նախկինում ճնշված ու խիստ հետամնաց ժողովուրդների տնտեսական ու կուլտուրական բուռն վերելքը վիթխարի խթան հանդիսացան գաղութային ու կախյալ երկրների հարյուր միլիոնավոր աշխատավորների համար։ Այդ հաջողությունները ցույց են տալիս, որ ազգային աղատագրությունը հնարավոր է միայն օտարերկրյա և «սեփական» շահագործողների դեմ վճռական պայքարի շնորհիվ։ ՍՍՀՄ փորձը ցույց է տալիս, որ ժողովուրդները թոթափելով սոցիալական ու ազգային ճնշումը, ձեռք են բերում ոչ միայն իրավունք ու աղատություն, այլև համակողմանի զարգացման ու բարգավաճման անսահման հնարավորություններ։

ЛЕНИНСКАЯ ДРУЖБА НАРОДОВ СССР

ГУРГЕН ХАЧАТРЯН

Резюме

Великий Октябрь, положивший начало глубоких политических и социальных перемен, как в нашей стране, так и во всем мире, явился образцом решения национального вопроса, блестящим триумфом ленинской национальной политики КПСС. В совместном труде и борьбе за социализм выковался подлинно братский, нерушимый союз наций и народностей СССР. Сформировалась новая историческая общность людей —

13 «ՍՄԿԿ XXV համագումարի նյութերը», էջ 113։

14 Լ. Ի. Բրեժնև, Լենինյան կուրսով, հ. 4, Երևան, 1974, էջ 83—84։

советский народ. Прочной материальной основой этой дружбы стал сложившийся в пределах Советского Союза единый хозяйственный организм. Достигнуто фактическое равенство всех народов во всех сферах жизни общества. Всесторонне расцвела культура — национальная по форме и социалистическая по содержанию. Последовательная реализация КПСС ленинских принципов национальной политики привела к укреплению сплоченности народов СССР на основе общности их коренных интересов, целей и марксистско-ленинской идеологии. Выдающееся место в летописи строительства нового общества, в укреплении дружбы народов СССР займет последнее десятилетие, в особенности, великие начертания XXV съезда КПСС.